ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ռ. Հ.

Հայերի՝ Կիլիկիայի հետ կապերի հաստատման առաջին տեղեկությունները մեզ հասել են Աքեմենյան Պարսկաստանի տիրակալ Դարեհ Վշտասպի թագավորության տարիներից, երբ նրանք այդ հարուստ երկրամասի վրայով առևտուր էին անում Եգիպտոսի և Փյունիկիայի հետ: Դարեհի օրոք Կիլիկիան Աքեմենյան հսկայածավալ տերության 4-րդ սատրապության կազմում էր՝ տարեկան արքունի գանձարան մուծելով 300 տաղանդ ոսկի և 360 նժույգ հարկ: Հայտնի է նաև, որ Քսերքսես արքան Հունաստան արշավելիս կիլիկեցիներից գնել էր 100 նավ, ինչպես նաև տեղի բնակիչներից, որոնց թվում կային հայեր, կազմել մեկ զորագունդ:

Պատմահայր Մ. Խորենացու հավաստմամբ՝ դեռ Տիգրանից առաջ հայ թագավոր Արամը գրավել էր Կապադովկիան՝ այնտեղ թողնելով իր ծառա մշակին:

Հայերի ելումուտը Կիլիկիա և աստիճանաբար հաստատվելը հիմնականում տեղի է ունենում Տիգրան Մեծից սկսյալ, որը գրավել էր Լեռնային Կիլիկիան՝ դառնալով Հռոմի անմիջական հարևանը (մ.թ.ա. 103-102 թթ. Դաշտային Կիլիկիան գրավել էր հզոր Հռոմը: Այնտեղ հռոմեական առաջին պրոկոնսուլներից էին Սուլլան և հռչակավոր հռետոր Ցիցերոնը): Արդեն մ.թ. IV դարում Կիլիկիան այնքան հայաշատ էր, որ նույն դարի հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելլոսը Միջերկրական ծովի հյուսիսարևելյան անկյունն անվանում էր Հայկական ծոց (խոսքը Ալեքսանդրետի ծոցի մասին է - Գ. Ռ.)[1]: Մի հանգամանք, որն աներկբայորեն վկայում է հայերի՝ հոծ զանգվածներով Կիլիկիայում հաստատվելու մասին: IV դարի երկրորդ կեսին Կոկիսոն աքսորված Հովհան Ոսկեբերանը իր նամակներից մեկում շնորհակալություն էր հայտնում հայազգի տեղացիներին, մասնավորապես Դիոկորոս անունով ազնվականին՝ բարեսրտության և իրեն օգնելու համար: Հայ էր նաև Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսը (Հովհան Ոսկեբերանի ուսուցիչը): Սա, անկասկած, խոսում է այդ շրջաններում հայերի քաղաքական կշռի և ազդեցության աճի օգտին: Կիլիկիայում ստվար հայության գոյության ապացույցն էր և այն, որ VI դ. Քրիստափոր կաթողիկոսը հատուկ կոնդակով կիլիկիահայությանը պատվիրեց չհարել նեստորականությանը[2]:

Բյուզանդիայի վարած քաղաքականության պատճառով XI դ. սկզբին տեղի է ունենում Վասպուրականի հայ բնակչության արտագաղթը Կիլիկիա: XI դ. երկրորդ կեսին թուրք-սելջուկների ավերիչ արշավանքները, խաղաղ և ստեղծագործ բնակչության կոտորածն ու կողոպուտը, պետականության անկումը պատճառ հանդիսացան դեպի Կիլիկիա հայերի նորանոր արտագաղթերի համար: Նույն

---

[1] **Պողոսեան Յ.,** *Հայոց ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գոգան Տաղի հայ գիւղերը, Լօս Անճելէս, 1942, էջ 13:*

[2] *Նույն տեղում, էջ 14:*

դրդապատճառներից ելնելով՝ Կարսի Գագիկ արքան իր թագավորությունը հանձնում է Բյուզանդիայի կայսր Կոնստանտին Դուկասին՝ փոխարենը ստանալով Կիլիկյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաղաքը: 1073 թ. իր զորաջոկատով Կիլիկիա է տեղափոխվում Գանձակի շրջանում գտնվող Մայրեացջուրի հայ իշխան Օշինը՝ հաստատվելով Լամբրոն և Պապերոն բերդերում: Դրա հետևանքով արդեն XI դ. 40-ական թթ. Կիլիկիայում և հարակից շրջաններում, մինչև Մեծ Հայքի սահմանները ձգվող տարածքում առաջանում են Բյուզանդիայից վասալային կախվածության մեջ գտնվող մի քանի հայկական իշխանություններ (Փիլարտոս Վարաժնունու, Աբլղարիբ Արծրունու, Գող Վասիլի, Օշինյանների և այլն):

1080 թ. Լեռնային Կիլիկիայում Բյուզանդիայի դեմ ապստամբում է Ռուբեն իշխանը և, վտարելով բյուզանդացիներին, հիմք է դնում հայկական անկախ իշխանությանը Կիլիկիայում: Այն պատմության մեջ հայտնի է Ռուբինյան իշխանություն (1080-1198), իսկ ավելի ուշ՝ Ռուբինյան թագավորություն անունով:

Աստիճանաբար հզորանալով՝ Ռուբինյանները հաստատվում են նաև Դաշտային Կիլիկիայում: Օգտագործելով խաչակրաց արշավանքները, իր հակառակորդների միջև առկա հակամարտությունը, ճիշտ կողմնորոշվելով տարբեր երևույթների և իրադարձությունների բարդ խաչաձևումներում, հենվելով ներքին հզորության վրա՝ Կիլիկիայի Լևոն Բ իշխանը 1198 թ. Տարսոն քաղաքում իրեն թագավոր է հռչակում, որի հետ կամա թե ակամա հարկադրված էին հաշտվել թե՛ Եվրոպան, թե՛ Արևելքը:

Այնուհետև՝ մինչև XIII դ. 60-70-ական թթ., հետևում է Կիլիկիայի հայկական թագավորության հզորացման ժամանակաշրջանը (Հեթում Ա թագավորի օրոք): Սակայն XIV դ. մահմեդական պետություններով շրջափակված Կիլիկիան գնալով ավելի ու ավելի է թուլանում, երկրում խորանում է քաղաքական ճգնաժամը: Դրա հետևանքով 1375 թ. եգիպտական մամլյուկների, Տարսոնի և Հալեպի ամիրայությունների հարվածներից կործանվում է Կիլիկիայի հայկական պետությունը[3]:

Թագավորության կործանումից հետո մեզ սակավ և կցկտուր տեղեկություններ են հայտնի միջնադարյան Կիլիկիայի պատմության վերաբերյալ: Ստույգ հայտնի է սակայն, որ, չհաշտվելով ստեղծված իրադրության, պետականության կորստի հետ, հատկապես Լեռնային Կիլիկիայի հայերը համառ և անզիջում պայքարի գնով շուրջ 50 տարի ի զորու են եղել պաշտպանել իրենց անկախությունը: 1370-ական թթ. Մարաշում, Զեյթունում և շրջականերում իր իշխանությունն էր հաստատել Զյուլ Կադիր օղլուների ցեղը, Սիսն իր շրջակայքով գտնվում էր Ռամազան օղլուների տիրապետութ-յան ներքո, իսկ 1405-1431 թթ. Կիլիկիայում առավել հզորության էր հասել Կարաման օղլուների ցեղը, «որի տիրապետության ժամանակաշրջանից էլ

[3] Կիլիկիայի այս շրջանի պատմության մասին մանրամասն տե՛ս Микаелян Г. *История Киликийского армянского государства, Е., 1952.*

Կիլիկիայի մի մասն սկսեց կոչվել Կարամանիա»[4]:

1482 թ. օսմանյան թուրքերը սուլթան Բայազիդի գլխավորությամբ պարտության մատնեցին Կարաման օղլուներին և, շարունակելով առաջխաղացումը, առաջին անգամ ոտք դրեցին Կիլիկիո հողին: Սակայն նրանց իշխանությունը հաստատուն չէր: Ավելի քան երկու դար Կիլիկիան գտնվում էր ավշարական ծագում ունեցող Գոզան օղլուների տիրապետության ներքո, որոնք մինչև XIX դ. կեսերը պահպանեցին իրենց իշխանությունը՝ համակերպվելով Զեյթունի, Հաճընի, Բեյլան և Գյավուր լեռների հայերի կիսանկախ վիճակի հետ, բավարարվելով «մի թեթև հարկով և չէին խառնվում այդ անկախ հայերի ներքին կառավարության մեջ»[5]: Այսպես, ցանկանալով այցելել Լեռնային Կիլիկիա, 1852 թ. Սսի կաթողիկո-սին է դիմում ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Վ. Լանգլուան, խնդրում նրա աջակցությունը՝ ցույց տալով նահանգապետի ֆիրմանը, որին կաթողիկոսը պատասխանում է, որ կուսակալը «Ատանայի Տարսոնի վրա կիշխե, իսկ լեռան տիրողը Խոզան-օղլուն է»[6]:

1832 թ. Կիլիկիա է ներխուժում Եգիպտոսի Մուհամմեդ Ալի փաշան՝ զգալի տարածքներ գրավում (Իբրահիմ փաշան նույնիսկ գրավում է Ադանան), սակայն մեծ տերությունների միջամտության շնորհիվ, 1840 թ. Լոնդոնում կնքված պայմանագրի համաձայն, գրավված շրջանները վերադարձվում են Օսմանյան Թուրքիային: Թուրքական իշխանությունները միայն 1866 թվականին՝ Զեյթունի ապստամբությունից մի քանի տարի հետո, միայն ի զորու եղան ճնշելու Ռամազանների, Զյուլգատիրների, Կարամանների և Գոզան օղլուների ընդվզումները և Լեռնային Կիլիկիայում հաստատելու իրենց տիրապետությունը[7], սկսելով երկրամասի մահմեդականացման, ավելի ուշ՝ թուրքացման քաղաքականությունը:

Պատմաբանները տարակարծիք են Կիլիկիայի XIX դ. վերջի և XX դ. սկզբի բնակչության թվի վերաբերյալ: Թուրքիայում երբեք ճիշտ կազմակերպված, հավաստի վիճակագրություն չի եղել, ուստի խիստ դժվար է Կիլիկիայի բնակչության, առավել ևս հայ ազգաբնակչության թվաքանակի ճշգրտումը, քանզի մարդահամարների տվյալնե-րում օսմանյան իշխանությունները միանգամայն միտումնավոր նվազեցնում էին հայերի թիվը:

Ինչպես գիտենք, հայերը և հույները Կիլիկիայում բնակություն էին հաստատել դարեր առաջ՝ դրանով իսկ վաստակելով բնիկության իրավունք, ավելի ուշ՝ քրդերը, որոնց մասին հիշատակվում է IX դ. աղբյուրներում: XI-XII դդ.՝ սելջուկ-թուրքերի արշավանքների և տիրապետության ժամանակաշրջանում, Կիլիկիայում

---

[4] **Պողոսյան Հ.,** *Զեյթունի պատմությունը, Ե., 1969, էջ 96: Տե՛ս նաև* **Ալպոյաճեան Արշակ Ա.,** *Պատմութիւն հայ Կեսարիոյ, Ա. հատոր, Գահիրէ, 1937, էջ 72:*

[5] **Առաքելեան Հ.,** *Զէյթուն, Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիզ, 1896, էջ 14, 38:*

[6] *Նույն տեղում, էջ 39:*

[7] **Քիւրքճեան Վ.,** *Հայկական Կիլիկիա: Ուսումնասիրութիւն մը Կիլիկիոյ Հայկական թագաւորութեան վրայ: Պանծալին Այաս, Նիւ Եորք, 1919, էջ 31: Տե՛ս նաև* **Առաքելեան Հ.,** *նշվ. աշխ., էջ 13:*

աստիճանաբար սկսել էին հաստատվել թյուրքական ծագում ունեցող ցեղերը (20-22 ցեղ), ապա ավշարները, արաբանսարիները, թուրքերը, իսկ 1864 թ.՝ Կովկասից գաղթած չեչենները, որոնք 1890-ական թթ. կազմում էին մոտ 1000 տուն[8]: Մ. Քելեշյանի հավաստմամբ՝ Կիլիկիայում բնակվում էին թուրքեր, չերքեզներ, թուրքմեններ, քրդեր, ավշարական ծագում ունեցող ցեղեր, արաբ-անսարիներ կամ ֆելլահներ, հույներ և այլն[9]:

Ղ. Ալիշանն իր «Սիսուանում» բերում է 1885 թ. վերաբերող տվյալներ, ըստ որոնց՝ Կիլիկիայի հայության թիվը կազմում էր 75000 կամ 15000 տուն[10]: Անտարակույս, այս տվյալները շատ հեռու են իրական պատկերն արտացոլելուց:

Վ. Լանգլուան Կիլիկիո ողջ բնակչության թիվը ցույց է տալիս 150000 այն դեպքում, երբ նույն տարիներին եվրոպացի մեկ այլ ճանապարհորդ՝ Բայքորը, նշում է 300000: Յավոք, մեզ անծանոթ են նրանց տվյալների աղբյուրները: Բերենք Վ. Լանգլուայի տվյալները Սսի կաթողիկոսությանը ենթակա հայերի թվի մասին (վիճակագրությունը կազմված է 1850 թ.):

Աղյուսակ 1

1	**Ադանայի վարչական շրջան**
	Սիս …… 200 տուն Ադանա …… 800 տուն Տարսոն …… 100 տուն Գյավուր դաշի գավառ …….. 50 տուն
2	**Մարաշի վարչական շրջան**
	Ֆոնուզ …….. 600 տուն Հաճըն …… 500 տուն Զեյթունի գավառ ……... 3000 տուն Մարաշ …….. 700 տուն
3	**Հալեպի վարչական շրջան**
	Այնթապ ……. 1300 տուն Հալեպ …… 200 տուն Անտիոք …….. 900 տուն Քիլիս …… 150 տուն Կիպրոս ……... 400 տուն
	Գումար …… 13 400 տուն[11]

[8] **Գալուստեան Գ.,** *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 9:*

[9] **Քէլէշեան Մ.,** *Սիս-Մատեան, Պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 19:*

[10] **Գալուստեան Գ.,** *նշվ. աշխ., էջ 9:*

[11] **Առաքելյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 45-46:*

Թողնենք այն, որ Հալեպը, Անտիոքը և առավել ևս Կիպրոսը չեն մտնում Կիլիկիայի աշխարհագրական սահմանների մեջ: Եթե ընտանիքի միջին մեծությունը հաշվենք 5 հոգի, ապա Կիլիկիո ողջ հայ ազգաբնակչության թիվը կկազմի 67 000 մարդ: Հարկ է նշել, որ բացի Զեյթունի (որի հայության թիվը համեմատաբար ճիշտ է ներկայացված) և Գյավուր դաղի գավառակների, որոնք Վ. Լանգլուան սխալմամբ համարում է գավառներ, հայ բնակչության թվական տվյալները վերաբերում են հիմնականում քաղաքներին, քիչ թե շատ խոշոր բնակավայրերին և ոչ թե նաև գյուղերին, ինչպես նաև մի շարք այլ շրջաններին (Մամեստիա, Անթաքիա, Սուետիա, Լաթաքիա, Մերսին, Ինջիրլիկ և այլն), որոնց հայ բնակչությունը, անկասկած, չի հաշվարկվել: Ուստի պարզ է, որ Վ. Լանգլուայի տվյալները չեն համապատասխանում իրականությանը:

1894 թ. հրատարակված «Արաքսի» Կիլիկիայի համաձայն՝ երկրամասի ողջ բնակչության թիվը կազմում էր 403000 մարդ, որոնք բնակվում էին 1629 գյուղերում, 20 քաղաքներում և ավաններում: Ըստ այստեղ արձանագրված տվյալների՝ քրիստոնյաների թիվը Կիլիկիայում հաշվվում էր 168990, որից 97450-ը՝ հայ (69300 առաքելական, 15000 կաթոլիկ և 16000 բողոքական), 46000 հույն, 21000 ասորի, 93200 թուրք, 39600 քուրդ և թուրքմեն, 13200 չերքեզ, 12000 արաբ, 4 400 պարսիկ, 72000 տարբեր ազգության և դավանանքի պատկանող քոչվորներ, 4 539 եվրոպացի և այլն[12]:

1914 թ. հրատարակված Ա. Պիպեռճյանի «Գրպանի նորագույն ատլասը» Կիլիկիայի բնակչությունը ցույց էր տալիս 500000՝ յուրաքանչյուր քառ. կմ վրա հաշվելով 12 մարդ: Իսկ ֆրանսիացի գնդապետ, 1919 թ. Կիլիկիայում ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավար նշանակված Է. Բրեմոնի 1921 թ. լույս տեսած «Կիլիկիա (1919-1921)» գրքույկում Կիլիկիո ազգաբնակչությունը հաշվվում է 400000 մարդ (1912 թ. տվյալներով), որից 215000 քրիստոնյա և 185000 մահմեդական: Ցավոք, Է. Բրեմոնը չի նշում, թե քրիստոնյա ազգաբնակչության քանի տոկոսն էին կազմում հայերը[13]:

Ինչպես արդեն նշել ենք, թուրքական կառավարությունը միանգամայն միտումնավոր և հասկանալի պատճառներով նվազեցնում էր հայերի թիվը ողջ կայսրությունում՝ ջանքեր չխնայելով հնարավորինս քիչ ներկայացնելու այն: Ուստի պատահական չէ, որ Ադանայի վիլայեթի հայության թիվը ներկայացվում էր 100000 (Կիլիկիո ողջ ազգաբնակչության 1/8 մասը): Ինչպես նշել է այս հարցի ուսումնասիրողներից մեկը, «Արդի Կիլիկիայում տիրող տարրը ոչ-քրիստոնեայն կամ թուրքը կ'նկատուի. բայց տարբեր և սակայն իրական տեսութեամբ մը քրիստոնեա տարրը կամ հայն է Կիլիկիայի նշանակութիւն տուողը»[14]:

Այսպես, ըստ օսմանյան կառավարության 1892 թ. պաշտոնական վիճակագրության՝ Ադանայի վիլայեթում բնակվում էր 225000 մահմեդական (ողջ

---

[12] *Մատենադարան «Արաքսի», Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ (այսուհետև՝ Կիլիկիա…), Պետերբուրգ, 1894, էջ 15:*

[13] **Bremon E.** *La Cilicie en 1919-1921, Paris,1921, p. 10.*

[14] **Բակուրան,** *Կիլիկիա, Թիֆլիս, 1896, էջ 10:*

ազգաբնակչության 56 %-ը), 97000 հայ (24%), 75000 այլազգի քրիստոնյա (19 %), ընդհանուրը՝ 400000 մարդ: Հատկանշական է, որ մահմեդականների թիվը չի նշվում ըստ ազգային պատկանելության: Հալեպի վիլայեթում բնակվում էր 790000 մահմեդական (75 %), 49000 հայ (5 %), և 136000 այլազգի քրիստոնյա (ընդամենը՝ 995000 մարդ)[15]: Եթե ճշմարտության փոքր մաս կա վերոհիշյալ վիճակագրությունում, ապա դա, անտարակույս, մահմեդականների թեկուզ ուռճացված թիվն է: Կասկած չի հարուցում, որ ինչպես հայերի, այնպես էլ այլազգի քրիստոնյաների թիվը կտրուկ նվազեցված է: Համաձայն գրանցված պաշտոնական տվյալների՝ Ադանայի և Հալեպի վիլայեթներում հայերի թիվը կազմում էր 146000: Դա, ինչպես նկատել է Հ. Առաքելյանը, «պէտք է ընդունել եթէ ոչ պակասեցրած, գէթ իբրև minimum, ի նկատի ունենալով, որ թիւրքաց կառաւարութիւնը, Բեռլինի կոնգրեսից հետո, շարունակ աշխատել է հայերի թիւը պակաս, իսկ մուսուլմանների թիւը աւել ցոյց տալ»[16]: Եվ հետո այդ թիվը վերաբերում է միայն առաքելական եկեղեցուն դավանող հայերին, իսկ Կիլիկիայում, ինչպես հայտնի է, զգալի թիվ էին կազմում նաև կաթոլիկ և բողոքական հայերը, որոնց թուրքական իշխանությունները միտումնավոր տարանջատում էին իրենց ազգակիցներից՝ դասելով «այլազգի» քրիստոնյաների շարքում:

Հայերի թիվը Կիլիկիո թեմերում (հաշվարկված են ոչ բոլորը - Ռ.Գ.) «Արարատ» ամսագիրը 1895 թ. հունվարյան համարում նշում է 267 000[17]:

Հավաստի են Կ. Պոլսի պատրիարքարանի վիճակագրական տվյալները, ըստ որոնց՝ հայերի թիվը Կիլիկիայում Ուրֆայի (32600), Յոզղատի (28500) և Հալեպի (9878) սանջակների հետ հասնում էր 411000-ի: Նշենք, որ այդ սանջակների որոշ շրջաններ ներառված էին Կիլիկիայի աշխարհագրական տարածքի մեջ[18]:

Կիլիկիայի բնակչության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Միքայել Յիցիկյանը, որը, կիլիկիահայության տնտեսական վիճակն ու կենցաղն ուսումնասիրելով, միաժամանակ արժեքավոր նյութեր է հավաքել երկրամասի հայության թվի վերաբերյալ: Նրա հաշվումների համաձայն՝ կիլիկիահայության թիվը 1913 թ. կազմում էր 388 600 մարդ, որն ավելին էր ազգաբնակչության ընդհանուր թվի 1/5-ից[19]: Կ. Բասմաջյանի տվյալներով՝ Առաջին աշխարհամարտի նախօրեին Կիլիկիայում բնակվում էր 388000 հայ (875604-ից)՝ բնակչության ընդհանուր թվի 43,4%-ը[20]:

Բոլոր փաստերը համադրելով՝ կարելի է համարձակորեն պնդել, որ XX դ. սկզբներին Կիլիկիայում հայերի թիվը կազմում էր մոտ 400000: «Կիլիկիայի հայության

---

[15] *Տե՛ս* **Առաքելեան Հ.,** *նշվ. աշխ., էջ 47:*

[16] *Նույն տեղում, էջ 48:*

[17] *Նույն տեղում:*

[18] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 1, գ. 399, թ. 5:*

[19] *Մշակ, Թիֆլիս, 31.VII.1913, N 166:*

[20] **Basmadjian K. J.** *La Cilicie. Son passe et son avenir, Paris, 1919, p. 6.*

թիվը,- գրել է «Մշակ» թերթը,- 400000-ից պակաս չէ»[21]: Չնայած բազմաթիվ և պարբերաբար կրկնվող ջարդերին, տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական հալածանքներին և այն հանգամանքին, որ այդ ամենից փրկվելու համար բազմաթիվ հայորդիներ լքում էին հայրենական օջախները (միայն Ադանայի 1909 թ. կոտորածից հետո Կիլիկիայից արտագաղթեցին մի քանի տասնյակ հազար հայեր)՝ երկրամասում հայերը բացահայտ մեծամասնություն էին կազմում[22]:

Համաձայն 1864 թ. վարչական բաժանման՝ Կիլիկիան կազմում էր Ադանայի ամբողջ կուսակալությունը և Մարաշի սանջակը, որը Հալեպի վիլայեթի մի մասն էր: Կիլիկիայի մաս էին նաև 1866 թ. կազմավորված Հալեպի նահանգի նույնանուն գավառի առանձին կազաներ Ալեքսանդրետն ու Այնթապը: Ադանայի վիլայեթի արևմտյան կետը Ալայա քաղաքից փոքր-ինչ արևելք ընկած Իմամլու ավանն էր, իսկ մյուս կողմից՝ Հայոց ծոցի ափին, սահմանը վերջանում էր Ալեքսանդրետից մի փոքր հարավ: Այն ընդգրկում էր 40 000 կմ տարածք:

Արևմուտքից վիլայեթը սահմանակից էր Իկոնիայի վիլայեթին, հյուսիսից՝ Անգորայի, Մեբաստիայի (Սրվազ) վիլայեթների աննշան մասին, արևելքից, ինչպես նաև փոքր-ինչ հարավից՝ Հալեպի կամ Բերիայի վիլայեթին (Հալեպի և Մարաշի սանջակներով (գավառներով): Նշենք, որ Մարաշի սանջակը Հալեպի վիլայեթի մեջ է ընդգրկվել 1880 թվականին:

Վարչականորեն Ադանայի վիլայեթը բաժանվում էր 5 գավառների կամ սանջակների. 1) Ադանա, 2) Մերսին, 3) Ջեբել-Բերեքեթ, 4) Գոզան, 5) Իչիլի կամ Սելևկիա: Յուրաքանչյուր սանջակ բաժանվում էր կազաների (գավառակների), որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին նահիեների (գյուղախմբերի), իսկ նահիեները՝ քարիեների (գյուղերի): Ամենաուշ ձևավորված սանջակը Մերսինն էր՝ 1888 թ., երբ ավարտվեց Ադանա-Մերսին երկաթուղու կառուցումը, որով վերջինս կարևոր նշանակություն ձեռք բերեց առևտրատնտեսական առումով:

Ողջ նահանգը վարչականորեն բաժանվում էր 5 սանջակի, 19 կազայի և 21 նահիեյի՝ 220000 քրիստոնյա և 185000 մահմեդական ազգաբնակչությամբ[23]:

Այս տվյալները, որոշ տարբերություններով հանդերձ, համապատասխանում են այլ ուսումնասիրությունների[24]: Վարչական միա-

---

[21] Մշակ, 31.VII.1913, թիվ 166:

[22] Կիլիկիայի հայ ազգաբնակչության թվի մասին տե՛ս նաև **Marashlian L.** *Politics and Demography Armenians. Turks and Kurds in the Ottoman Empire, Cambridge, Paris, Toronto, 1991, pp. 69, 122-123, 170.*

[23] **Redan P.** *La Cilicie et le Probleme Ottoman, Paris, 1921, p. 15.*

[24] «Արաքսի» Կիլիկիայի համաձայն՝ վիլայեթը բաժանված է եղել 4 սանջակների (Ադանայի, Իչիլի, Գոզանի և Ջեբել Բերեքեթի), 19 կազայի և 23 նահիեյի՝ 1629 գյուղերով, 20 քաղաքներով և ավաններով (էջ 39): Տե՛ս նաև **Գալուստյան Գ.,** նշվ. աշխ., էջ 13-15 (այստեղ տարբերությունը

Աղյուսակ 2

Ադանայի նահանգ

Ադանայի գավառ	Մերսինի գավառ	Ջեբել-Բերե-քեթի գավառ	Գոզանի գավառ	Իչիլի գավառ
Կազաներ 1. Ադանա 2. Գարա-Իսալու 3. Համիդիե 3կազա և 7 գ.խումբ	կազաներ 1. Տարսոն 1կազա և 3 գ.խումբ	կազաներ 1. Ջեբել-Բերեքեթ 2. Իսլահիյե 3. Պայաս 4. Օսմանիե 5. Խասա 6. Պահճե (Պայաս) 6 կազա և 4 գ.խումբ	կազաներ 1. Սիս 2. Գարս-ուլ Գատրիե 3. Հաճըն 4. Վահկա 4 կազա և 4 գ.խումբ	կազաներ 1. Իչիլ 2. Արմենակ 3. Մութ 4. Գյուլնար 5. Անամուռ 5 կազա և 7 գ.խումբ

վորները հաճախ ենթարկվում էին փոփոխությունների՝ գավառից վերածվելով գավառակի մեկի կազմից մյուսին անցնելով, «Ինչպես օրինակ՝ Ճէպէլ Պէրէքեթի սանճագը 1870-ականներուն ունէր 2 գազայ, իսկ 1880-ականներու վերջաւորութեան՝ 5 գազայ (ինչպես վերը նշել ենք տարբեր աղբյուրներ Ջեբել-Բերեքեթի կազաների թիվը նշում են նաև 6 - Գ. Ռ.), իսկ 1910-էն ետք՝ 4 գազայ»[25]:

Աշխարհագրական առումով, ինչպես նշել ենք, Կիլիկիան ընդգրկում է 40000 քառ կմ տարածություն (ներառյալ՝ Մարաշի սանջակը և Այնթապի կազան), բայց Հայկական Կիլիկիան (Կիլիկիայի հայկական պետությունը XI-XIV դդ.) տարածվում էր շատ ավելի հեռու. Կոնիայի, Խարբերդի, Սեբաստիայի վիլայեթների որոշ շրջաններ և Հալեպի վիլայեթի բավական ընդարձակ մի տարածք մտնում էին հայկական պետության սահմանների մեջ: Ռաս-էլ-Խանձիր հրվանդանի հյուսիսարևելյան ուղղությամբ մինչև Հռոմկլա ընկած գծի հյուսիսային կողմում էին Մարաշի սանջակը և Հալեպի կենտրոնական գավառի մի մասը՝ Բելյանի և Ալեքսանդրետի գավառները, մեկական շրջան Քիլիսի և Այնթապի գավառներից, որոնք նույնպես մտնում էին Կիլիկիայի տարածքի մեջ[26]:

վերաբերում է միայն գյուղախմբերի թվին): **Առաքելյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 49-50,* **Marashlian L.,** *նշվ. աշխ., էջ 122-123: Առանձին հեղինակների մոտ տարբերվում են գավառների, գավառակների և գյուղախմբերի թվերը, որը պայմանավորված էր հաճախակի կատարվող վարչական ներքին փոփոխություններով:*

[25] **Սալբի Սաղտրճեան,** *Կիլիկիոյ վարչական բաժանումները 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբը, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), N 11, Ե., 2010, էջ 135, 136:*

[26] **Գալուստեան Գ.,** *նշվ. աշխ., էջ 15:*

Որպես առանձին վարչական միավոր՝ Մարաշի սանջակը սահմանակից էր Խարբերդի վիլայեթին, հյուսիսում՝ Սեբաստիային, արևմուտքում՝ Ադանայի վիլայեթին, իսկ հարավում՝ Հալեպի նահանգի նույնանուն գավառին՝ ընդգրկելով 18.405 քառ.կմ տարածություն: Ըստ «Արաքսի» Կիլիկիայի՝ 1890 թ. Մարաշի գավառը բաժանված էր 5 գավառակի (5 նահիե, 552 գյուղ), իսկ 1905 թ. հրատարակված «Սալնամեի Դևլեթի Օսմանիեի» պաշտոնական վիճակագրության համաձայն՝ սանջակի կազմում էին Մարաշի և նրան ենթակա Զեյթունի, Ալպիսթանի, Անտերունի և Փազարճըգի (Բազարջիկ) գավառակները՝ 23 գյուղախմբերով և 459 գյուղերով: Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանի վիճակագրական տեղեկությունների համաձայն (1912 թ.)՝ Մարաշ քաղաքում և շրջակայքում հայ բնակչության թիվը հասնում էր 37500-ի, Զեյթունում՝ 21000-ի, Ֆրնուզում՝ 7000-ի: Գավառի 178000 բնակիչներից հայեր էին 65000-ը[27]: Իսկ Պ. Ռըդանի տվյալներով՝ գավառի բնակչության թիվը 160 000 էր, ճնշող մեծամասնությամբ՝ հայեր[28]:

Աղյուսակ 3

Հալեպի վիլայեթ

Հալեպի գավառ	Ուրֆայի գավառ	Մարաշի գավառ
Կազաններ	Կազաններ	Կազաններ
1. Հալեպ 2. Այնթապ 3. Քիլիս 4. Բեյլան 5. Ալեքսանդրետ 6. Անտիոք 7. Հարիմ 8. Ջիզր-Շոր (Ճսըր-Շղուր) 9. Իդլիփ 10. Մուարաթ 11. Բահ-Ջեբուլ 12. Մեհրիջ 13. Ռեքքա 13 կազա	1. Ուրֆա 2. Ռում-Կալե (Հռոմկլա) 3. Սուրուճ 4. Բիրեջիկ 4 կազա	1. Մարաշ 2. Զեյթուն 3. Ալպիսթան 4. Անտերուն 5. Փազարճըգ 5 կազա, 28 գյուղախումբ

Հարկ է նշել, որ հայ ազգաբնակչության ամի վրա ազդել էին և՛ 1890-ական թթ. ջարդերը, և՛ անապահով կյանքի, ազգային հալածանքի հետևանքով տեղի ունեցող արտագաղթը, և՛ 1909 թ. կոտորածները:

Ինչպես վերը նշել ենք, աշխարհագրական առումով Կիլիկիայի տարածքում էին նաև Այնթապը (8 նահիե, 202 գյուղ), Քիլիսը (7 նահիե, 460 գյուղ) և Ալեքսանդրետը (1 նահիե, 24 գյուղ):

Այսպիսով, Կիլիկիան բաժանված էր Ադանայի և Հալեպի նահանգների միջև՝ իր կազմում ունենալով 10 գավառ, 24 գավառակ և ավելի քան 4000 գյուղ:

---

[27] *Նույն տեղում, էջ 17:*

[28] **Redan P.,** *նշվ. աշխ., էջ 16:*

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ И АДМИНИСТРАТИВНОЕ ДЕЛЕНИЕ КИЛИКИИ В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВВ.

ГАСПАРЯН Р. Г.

Резюме

Армяне стали заселять Киликию со времен правления Тиграна Великого, а в IV в. нашей эры Киликия была почти полностью заселена армянами, поэтому римский историк Аммиан Марцеллин северо-восточную часть Средиземноморья называл Армянским заливом.

В конце XIX–начале XX вв. этот регион был населен армянами, турками, курдами, черкесами, греками, арабами и другими народами. Османские власти умышленно сокращали численность населения армян в империи. Следовательно, не случайно численность армянского населения в провинции Адана была представлена властями в размере 100000 чел. На основе изучения данных армянских и иностранных источников можно утверждать, что армяне в Киликии составляли большинство – около 400000 чел.

Киликия была разделена между провинциями Адана и Алеппо. В ее состав входили 10 городов, 24 сельские общины и свыше 4000 деревень. Состав административных округов часто изменялся: города становились сельскими общинами, переходя из одного административного района в другой, что было обусловлено желанием изменить демографическую картину региона в пользу мусульманского населения.